...թյունը, որոնք ամբողջ ամե-

(Արմենպրես)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ստեփանակերտ, 27 հուլիսի (ՏԱՍՍ)։ Այսօր Լեռնային Ղարաբաղում աշխատանքն ավարտեց Ս. Ի. Մանյակինի նախագահությամբ ԼՂԻՄ-ի վերաբերյալ դեպուտատական հանձնաժողովը, որը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը կազմել է ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի հանձնարարության համաձայն։

Հուլիսի 20-ից մինչև 27-ը ԼՂԻՄ-ում կատարած աշխատանքի ժամանակամիջոցում հանձնաժողովի անդամները տեղան մարզային կենտրոնում և ինքնավար մարզի բոլոր շրջաններում։ Տեղի ունեցան հանդիպումներ ու զրույցներ հասարակական և խորհրդային ակտիվի, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի ձեռնարկությունների, կազմակերպությունների ու հիմնարկների աշխատավորական կոլեկտիվների ղեկավարների ու անդամների, ժողովրդական կրթության, մշակույթի, մասսայական ինֆորմացիայի միջոցների, իրավապահ մարմինների աշխատողների, ԽՍՀՄ ներքգործմինիստրության ներքին զորքերի՝ հատուկ շրջանում ծառայող զինվորականների հետ։ Նման հանդիպումները, որպես կանոն, ուղեկցվում էին ձեռնարկություններ, կազմակերպություններ, հիմնարկներ այցելելով։

Հանձնաժողովի անդամները հանդիպումներ ունեցան Լեռնային Ղարաբաղի առավել խոշոր ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվների, Հայկական ու Ադրբեջանական այնպիսի գյուղերի և ավանների բնակիչների հետ, որտեղ շարունակվում է առավել մեծ լարվածությունը, և կոնֆլիկտներ, բախումներ են տեղի ունեցել ազգամիջյան հողի վրա։ Ամենուրեք կազմակերպվում էր բնակչության ընդունելություն։ Բացի դրանից, հանդիպումներ ու զրույցներ անցկացվեցին երկու ազգությունների գաղթականների, պատերազմի ու աշխատանքի վետերանների հետ, արհմիութենական, կոմերիտական, կանանց, կրոնական, ստեղծագործական, բարեգործական և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։

ԽՍՀ Միության Կենտրոնական մարմիններում, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտեում, ԼՂԻՄ-ի մասսայական ինֆորմացիայի օրգաններում, հասարակական կարգի պահպանության մարմիններում հանձնաժողովի անդամները ծանոթացան տարբեր կազմակերպությունների, աշխատավորական կոլեկտիվների ու առանձին քաղաքացիների փաստաթղթերին, դիմումներին, նամակներին ու առաջարկություններին, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ելույթներին, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին։

Տեղում հանձնաժողովի աշխատանքին օգնություն էին ցույց տալիս ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն, տեղական կուսակցական ու խորհրդային մարմինները, ինչպես նաև ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները։

Հանձնաժողովի ընդհանրացված նյութերը և առաջարկությունները կներկայացվեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի քննարկմանը։